

Ինչպես իմանանք, որ երեխաները սովորում են

Մենք ուզում ենք վստահ լինել, որ Ձեր երեխան առաջընթաց է արձանագրում մեր ծրագրում: Դրա համար մենք հետևում ենք, թե ինչ գիտի և ինչ կարող է անել յուրաքանչյուր երեխա: Այս տեղեկություններն օգնում են մեզ պլանավորել հետագա դասավանդման և սովորելու համար: Մենք հետևում ենք յուրաքանչյուր երեխայի առաջադիմությանը, երբ նրանք սովորում են նոր հմտություններ և ընթացքում աջակցում ենք իրենց: Այս տարիքային խմբի համար թեստերը հուսալի չեն, դրա համար մենք հետևում ենք, թե ինչ են անում երեխաները և նշումներ ենք անում: Մենք հավաքում ենք յուրաքանչյուր երեխային աշխատանքի օրինակները՝ նկարներ, գրառում, արվեստի գործերի լուսանկարներ և այլն: Բացի այդ, մենք կարևոր ենք համարում հարցնել Ձեզ, թե ինչ եք տեսել, որ անում է Ձեր երեխան և ավելացնում ենք դա Ձեր երեխայի առաջադիմության մեջ: Մենք ամփոփում ենք իրենց առաջադիմությունը և տրամադրում ենք այն Ձեզ տարվա մեջ մի քանի անգամ:

Ընտանիքի հետ համագործակցություն ստեղծելը

Մենք գիտենք, որ Դուք Ձեր երեխայի ամբողջ կյանքի կրթողն եք, դրա համար մենք հավատում ենք ընտանիքների հետ համագործակցության կարևորությանը՝ Ձեզանից սովորելու և Ձեր երեխային ճանաչելու համար: Մենք հավատացած ենք, որ Ձեր գաղափարները արժեքավոր են, դրա համար, Ձեզ հետ Ձեր երեխայի պլանի մշակումը համարվում է մեր ուսումնական պլանի մի մասը: Այն ընտանիքները, որոնք ներգրավված են ծրագրի բոլոր ասպեկտներում, ազդեցություն ունեն մեր երեխաների սովորելու և զարգանալու վրա:

Թե գրանցման վերաբերյալ հարցեր ունեք խնդրում ենք օգտվել WWW.CCRCCA.ORG

Թե Դուք արդեն գրանցված եք և հարցեր ունեք խնդրում ենք դիմել Ձեր դպրոցին



Child Care Resource Center™
Quality · Support · Development · Education

Ստեղծարար ուսումնական պլան

Ցանկանում եք արդյոք, որ Ձեր երեխան՝

- Ընկերանա ուրիշների հետ:**
- Լավ սովորի դպրոցում:**
- Լավ կարդացող դառնա:**
- Ստեղծարար լինի:**
- Լուծի մաթեմատիկական խնդիրներ:**
- Որոշումներ կայացնի:**
- Լավ գրի և կարդա:**
- Սովորելուց հաճույք ստանա:**
- Ձեռք բերի ֆիզիկական հմտություններ:**
- Լինի ինքնավստահ և հարգալից:**



CCRC 0-5

Վաղաժամ մեկնարկը կարող է օգնել՝ պատրաստելու Ձեր երեխային հաջողություններ ունենալ դպրոցում և կյանքում: Մեր ուսումնական պլանը և տանը և դպրոցում միասին աշխատելու կարևորությունը կօգնեն ձեռք բերել հմտություններ, վարվելակերպ և սովորույթներ՝ դպրոցում հաջողություններ ունենալու համար:

Ստեղծարար ուսումնական պլանը մի ձև է երեխաներին իմանալու համար. նրանց անհատականությունը, կյանքի փորձը, երկու լեզվի իմացությունը և այլն: Ինչպես նաև իմանալու իրենց հասած ուղենիշերը և զարգացումը, ինչպիսիք եք՝ սոցիալականը, հուզականը, ֆիզիկականը, ճանաչողականը և լեզվականը:

Փիլիսոփայություն

Ստեղծարար ուսումնական պլանի փիլիսոփայության համաձայն՝ երեխաների հաջողության հասնելու օգնության լավագույն ձևը սովորեցնելն է նրանց լինել ստեղծագործ, ինքնավստահ մտածողներ:

Կյանքի առաջին տարիներին, երեխաները գննում են շրջակա աշխարհը՝ օգտագործելով իրենց բոլոր զգայարանները (շոշափել, համտեսել, լսել, հոտ զգալ և տեսնել): Երեխաների համար նախատեսված գործողությունները, մեր կողմից միջավայրի կազմակերպումը, խաղալիքների և նյութերի ընտրությունը, օրակարգի պլանավորումը և երեխաների հետ շփումը, ամբողջությամբ նախատեսված է մեր ուսումնական պլանի նպատակների իրականացման և Ձեր երեխային դպրոցում հաջող մեկնարկ տալու համար:

Ստեղծարար ուսումնական պլանի նպատակները

Վաղ մանկական տարիքի մեր ուսումնական պլանի ամենակարևոր նպատակն է՝ օգնել երեխաներին դառնալ եռանդուն սովորողներ: Սա նշանակում է՝ խրախուսել երեխաներին լինել ակտիվ և ստեղծարար հետազոտողներ, ովքեր չեն վախենում փորձել իրենց գաղափարները և մտածել սեփական մտքերը: Մեր նպատակն է՝ օգնել երեխաներին դառնալ անկախ, ինքնավստահ, հետաքրքրասեր սովորողներ: Մենք սովորեցնում ենք նրանց ինչպես սովորել, ոչ միայն 0-5 Վաղաժամ մեկնարկում, այլ ամբողջ կյանքի ընթացքում:

Ինչպես են սովորում երեխաները

Երեխաները սովորում են օրվա յուրաքանչյուր րոպե: Մենք աջակցում ենք նրանց սովորելուն՝ դասասենյակների կազմակերպմամբ, ակտիվ գործունեություն ներառող օրակարգով, ներսի և դրսի խաղերով: Մեր բոլոր դասասենյակներն ունեն հետաքրքրությունների տարբեր տարածքներ, որոնք ընտրություն կատարելու և որոշում կայացնելու հնարավորություն են տալիս երեխաներին՝ խաղի միջոցով ուսումնասիրելու և տարբեր հմտություններ ձեռք բերելու համար:

Հետևյալ ցանկը ներկայացնում է մեր հետաքրքրության տարածքներում երեխաների սովորելու որոշ օրինակներ՝

- Բլոկների տարածք- նրանք սովորում են մաթեմատիկա, ուրվագծեր և միասին խաղալ:
- Դրամատիկ խաղ- սովորում են լեզու, երևակայություն, խնդիրների լուծում և ուշադրության մեծացում
- Արվեստի տարածք- Ստեղծագործություն, ընդհանուր խաղ, պլանավորում և գնահատում, ինքնաարժևորում և արվեստի գնահատում
- Խաղալիքներ և խաղեր- մեծացնում է աչքի և ձեռքի համակարգումը, հիշողությունը, չափի և պատկերի հարաբերակցությունը
- Բացահայտում- սովորում են աշխարհի մասին՝ օգտագործելով իրենց պատկերացումը և հետազոտությունը
- Գրադարան- լեզվական հմտություններ, բարձր գրագիտություն
- Ավագ և ջուր – զգայարաններ, նյութերի թափվել, կանխատեսումներ և միասին խաղ
- Երաժշտություն և շարժում- Լսել, երգել, լինել ստեղծարար և հետևել հրահանգներին
- Բակ – հավասարակշռություն, համատեղ խաղ, խոշոր շարժման հմտությունների զարգացում

Ինչի մասին են սովորում երեխաները

Նորածիններ և մանուկներ

Երեխաների հետաքրքրությունների համապատասխանող տարբեր պլանավորված գործողությունների միջոցով՝ ուսուցիչները սովորեցնում են նորածիններին և մանուկներին կառավարել իրենց զգացմունքներն ու վարքը, հիմնում են մշտապես դրական հարաբերություններ, մասնակցում են միասին, որպես խմբի անդամ և զարգացնում են դրական վերաբերմունք սովորելու նկատմամբ:

Նախադպրոցական տարիք

Մեր նախադպրոցական տարիքի խմբի ուսուցիչները պարզում են, թե ինչ արդեն գիտեն երեխաները և ինչ են նրանք ցանկանում իմանալ և մշակում են դասեր, որոնք կապված են իրենց աշխարհի հետ: Այսպես սովորելը թույլ է տալիս լինել ավելի բնական և առաջնորդել երեխաների հետաքրքրությունները: Դասերի միջոցով՝ երեխաները կարող են հաղորդակցվել հասկացության իրենց մակարդակի վրա:

